With funding from
Austrian Development Cooperation

ICARE
INTERNATIONAL CENTER FOR AGRIBUSINESS RESEARCH AND EDUCATION

# fruitenia

## ԻՆՉՈ՞Ւ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ՝

Գյուղատնտեսությունը սոսկ ֆերմերային աշխատանք չէ. այն կայուն ապրելակերպ է և միջոց: Գյուղատնտեսությունը կա ու կմնա Հայաստանի տնտեսության համար ամենակարևոր ոլորտներից մեկը, իսկ գյուղատնտեսական կրթությունը՝ անհրաժեշտ գործիք ոլորտի զարգացման համար: Այդ ամենի հետ մեկտեղ կարևոր է նաև կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընձեռումը:




- Հայաստանում պաշտոնական վիճակագրությամբ կանանց 56%-ն է ներգրավված գյուղատնտեսության մեջ.

Եթե զարգացող երկրներում գյուղատնտեսության ոլորտի կանանց տրվեր ռեսուրսներին հավասարաչափ հասանելիություն, ինչ տղամարդկանց, ստացվող գյուղատնտեսական արտադրանքի ծավալը կաճեր 20-30%-ով:

## ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԵՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝

Առ այսօր գյուղական համայնքներում կանայք ֆերմերային տնտեսությամբ զբաղվող բնակչության խոցելի խմբերից են և բախվում են բազմաթիվ մարտահրավերների կրթական և մասնագիտական ասպարեզներում:

Հարկ է նշել, որ երկար ժամանակ կանանց ներդրումը գյուղատնտեսության ոլորտում թերարժևորվել է, հետևաբար այժմ շատ կարևոր է ընդլայնել կանանց համար կրթական հնարավորությունները և տրամադրել անհրաժեշտ տեխնիկական աջակցություն:

## ԻՆՉՊԵ՞Ս Է ՖՐՈՒՏԵՆԻԱ ՆԱԽԱԳԻԾԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝

Գենդերային հավասարության և սոցիալական ներառվածության հետ առնչվող խոչընդոտների նվազեցման կամ դրանց հաղթահարման համար նախագծի շրջանակում իրականացվելու են հետևյալ գործողությունները՝

- Ավագ դպրոցներում բարձրացվելու է գենդերային անհավասարության հիմնախնդրի մասին տեղեկացվածությունը
- Նվազեցվելու է տարբեր սեռերի ուսանողների անհավասարաչափ բաշխվածությունը գյուղատնտեսական բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնավորապես այգեպտղաբուծության բնագավառում
- Երաշխավորվելու է երկու սեռերի հավասար մասնակցությունը երիտասարդական ճամբարներին
- Հզորացվելու են կանանց կարողությունները՝ տարբեր կարճաժամկետ կրթական ծրագրերում նրանց ներգրավելու միջոցով:



ICARE Հիմնադրամ
Հայաստան, ք. Երևան, Տերյան 74

098-334-565, 010-569-670
info@icare.am
icare.am

Ավելին՝ →